ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2017 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-179-09.11.2017-ՖՎ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի_7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1433 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-179-09.11.2017-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Գանձապետարանի աշխատակիցներ են համարվում Կենտրոնական գանձապետարանի և գանձապետարանի ստորաբաժանումների՝ սահմանված կարգով հաստատված հաստիքացուցակներում ներառված պաշտոնները զբաղեցնող անձինք:»:

Նախագծի 4-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը «սահմանված կարգով» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 152-րդ և 153-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կառավարության անդամներն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Այդ առումով նախագծի 4-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակ նշել այն իրավական ակտի տեսակը, որով սահմանված կարգով հաստատվում են կենտրոնական գանձապետարանի և գանձապետարանի ստորաբաժանումների հաստիքացուցակները:

2. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է «ֆինանսական միջոցների կառավարման համակարգը» բառերը փոխարինել «ֆինանսական միջոցների կառավարման կանոնները և պահանջները» բառերով: Այդ առումով պարզ չէ, թե հիշյալ կանոններն ու պահանջներն ում կողմից և ինչ իրավական ակտով են սահմանվում:

Նույն կետում «բառով» բառն անհրաժեշտ է փոխարինել «բառերով» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:

3. Նախագծի 7-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է նոր խմբագրությամբ շարադրել օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի՝ պետական մարմնի համակարգի յուրա-

քանչյուր պետական հիմնարկում օրենքով սահմանված կարգով և վերադաս պետական մարմնի գլխավոր ֆինանսիստի համաձայնությամբ նշանակվում է հիմնարկի գլխավոր հաշվապահ: Այդ առումով բաց է մնում այն կարգավորումը, որով պետք է սահմանվի, թե ում կողմից է նշանակվում գլխավոր հաշվապահ:

4. Նախագծի 9-րդ հոդվածում «բառը» բառն անհրաժեշտ է փոխարինել «բառերը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:

5. Նախագծի 10-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակ նշել օրենքի 16-րդ հոդվածի այն մասերը կամ կետերը, որոնցում նախատեսվում է «գործառնական» բառը փոխարինել «գործառական» բառով:

Նույն հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ օրենքի 16-րդ հոդվածի «բ» կետում առկա են չհամարակալված պարբերություններ, այլ ոչ թե 2-րդ և 3-րդ ենթակետեր՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:

Նույն հոդվածում «բառերը» բառն անհրաժեշտ է փոխարինել «բառը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:

6. Նախագծի 12-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է նոր խմբագրությամբ շարադրել օրենքի 19-րդ հոդվածը, ըստ որի՝ գանձապետարանն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի մարման և սպասարկման ծրագրավորումը և այդ ծրագրին համապատասխան՝ օրենքով սահմանված արտաքին պարտքի մարումը և սպասարկումը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետի համաձայն՝ գանձապետարանի խնդիրներն են Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի սպասարկումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախագծի վերը նշված հոդվածի վերնագրում և բովանդակության մեջ «պարտքի» բառից առաջ լրացնել «պետական» բառը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար է համարում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագիծը քննարկել Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացրած «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Կ-191-27.11.2017-ՖՎ-011/0) քննարկումների համատեքստում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-179-09.11.2017-ՖՎ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-211 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի «գանձապետական համակարգը (այսուհետ՝ գանձապետարան)» բառերը փոխարինել «գանձապետական համակարգի (այսուհետ՝ գանձապետարան) գործունեության իրավական հիմքերը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի «կառավարման համակարգի առկայությունը» բառերը փոխարինել «կառավարումը» բառով:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) «ա)» կետից հանել «գործի» բառը.

2) «գ)» կետը շարադրել նոր խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման հետ կապված հարաբերությունների նորմատիվային կարգավորման մեթոդական ապահովումը.» .

3) «ե)» կետում «նորմատիվ» բառը փոխարինել «նորմատիվային» բառով:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «սահմանված կարգով» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը.

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «պաշտոնի է նշանակվում և ազատվում գլխավոր ֆինանսիստ» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով նշանակվում է գլխավոր ֆինանսիստ» բառերով.

2) 2-րդ մասի «և համապատասխան լիազորությունների դեպքում կարող է կատարել այլ պարտականություններ» բառերը փոխարինել «և իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ» բառերով:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «արդյունավետ և հրապարակային օգտագործման» բառերը փոխարինել «արդյունավետ օգտագործման և դրա հրապարակայնության ապահովման» բառերով.

2) 3-րդ մասի «ա)» կետի «շարունակում է ապահովել» բառերը փոխարինել «պահպանում է» բառով, իսկ «համակարգը» բառը փոխարինել «կանոնները և պահանջները» բառերով.

3) 3-րդ մասի «բ)» կետի «սույն օրենքի և այլ ակտերի դրույթների պահպանումը» բառերը փոխարինել «սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջների կատարումը» բառերով.

4) 3-րդ մասի «գ)» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«գ) ապահովել պետական մարմնի անունից լիազոր մարմնին համապատասխան հաշվետվությունների ներկայացումը՝ ծախսերի գերակատարումը կամ պետական մարմնի կողմից հավաքվող եկամուտների թերակատարումը բացառելու անհնարինության դեպքում.».

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Պետական մարմնի համակարգի յուրաքանչյուր պետական հիմնարկում օրենքով սահմանված կարգով և վերադաս պետական մարմնի գլխավոր ֆինանսիստի համաձայնությամբ նշանակվում է հիմնարկի գլխավոր հաշվապահ:»:

Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածի «ա)» կետի «Հայաստանի Հանրապետության և համայնքների բյուջեների» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների» բառերով:

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «պետական» բառից հետո լրացնել «և համայնքային» բառը:

Հոդված 10. Օրենքի 16-րդ հոդվածում «գործառնական» բառերը փոխարինել «գործառական» բառով, իսկ 1-ին մասի «բ)» կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«- հաստատված բյուջեում Ազգային ժողովի կողմից կատարված փոփոխությունները,

- հաստատված բյուջեում կառավարության և (կամ) պետական մարմնի լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները,»:

Հոդված 11. Օրենքի 17-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության և համայնքների բյուջեների» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների» բառերով:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«*Հոդված 19. Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի սպասարկումը*

Գանձապետարանն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի մարման և սպասարկման ծրագրավորումը և այդ ծրագրին համապատասխան՝ օրենքով սահմանված արտաքին պարտքի մարումը և սպասարկումը:»:

Հոդված 13. Օրենքի 20-րդ հոդվածի «Հայաստանի Հանրապետության և համայնքների բյուջեներին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներին» բառերով:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

«Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ է մտել 2002 թվականի հունվարի 1-ին, որի կիրարկման անցած 15 տարիների ընթացքում ի հայտ են եկել մի շարք թերություններ և տարընթերցման հնարավորություն տվող դրույթներ, ինչպես նաև այս օրենքի ընդունումից հետո բյուջետային ոլորտը կանոնակարգող այլ օրենքներով ներմուծվել են նոր հասկացություններ, որոնց մի մասին տվյալ օրենքը չի համապատասխանում:

«Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է օրենքի գործողության ընթացքում ի հայտ եկած թերությունների, մասնավորապես՝ տարընթերցումների, երկիմաստությունների և ոչ հստակ դրույթների շտկման, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մի շարք օրենքներում կատարված փոփոխությունների ու լրացումների, ինչպես նաև գործող (հատկապես «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի) և ընդունված նոր օրենքների հետ տվյալ օրենքի ներդաշնակեցման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է՝

- օրենքի տարբեր հոդվածներից հանել ավելորդ և իրավական ծանրաբեռնվածություն չկրող բառերն ու արտահայտությունները (նախագծի 2-րդ և 5-րդ հոդվածներ),

- նոր խմբագրությամբ շարադրել օրենքի այն դրույթները, որոնք չունեն միանշանակ ընկալում կամ դրանց բովանդակությունը չի համապատասխանում հարակից մյուս օրենքների տերմինաբանությանը (նախագծի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներ),

- կատարել այնպիսի լրացումներ, որոնք անհրաժեշտ են համապատասխան նորմերի բովանդակության լիարժեք արտահայտման համար (նախագծի 4-րդ և 9-րդ հոդվածներ):

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է հնարավորինս հստակեցնել «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ամբողջ տեքստը և վերացնել դրա կիրարկման ընթացքում տարբեր խոչընդոտների ու տարընթերցումների ի հայտ գալու հնարավորությունը: